

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 23-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Տ. Իլիա Բ-ի եղբայրական հրավերով, ուղեկցությամբ Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի և Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի, մեկնեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի:

Թբիլիսիի երկաթուղային կայարանում վրացական Եկեղեցու պետ Տ. Իլիա Բ կաթողիկոսը, ընկերակցությամբ վրաց Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների, վրահայոց թեմական առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի և թեմի հոգևոր դասի, դիմավորեց Հայոց Հայրապետին և բարի գալուստ մաղթեց նրան:

Նոյեմբերի 24-ին, շաբաթ օրը, Նորին Սրբությունն Իր շքախմբով ներկա եղավ Ս. Սիոն վրացական Մայր տաճարում Տ. Իլիա Բ կաթողիկոսի կողմից մատուցվող երեկոյան հանդիսավոր ժամերգությանը, որի ընթացքում բարի-գալստյան և ողջույնի խոսքեր փոխանակվեցին երկու քույր Եկեղեցիների պետերի միջև:

Նոյեմբերի 25-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Հայրապետը ներկա աղավ Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում մատուցվող ս. պատարագին և Բանին կենաց քարոզությամբ մխիթարեց և Իր հայրապետական օրհնությունները բաշխեց տեղի հայ հավատացյալ ժողովրդին:

Թբիլիսիում Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ վրացական Եկեղեցու հովվապետի, պաշտոնական այցելություն տվեց Վրացական ՍՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր կրոնական գործերի լիակոր Ա. Ցիկլաուրիին: Հայոց Հայրապետի և մեծարգո լիակորի միջև տեղի ունեցավ ջերմ, բարեկամական զրույց:

Ամենայն Հայոց Հայրապետի Վրաստան կատարած այցելության առթիվ, համայն Վրաստանի կաթողիկոս Իլիա Երկրորդը, ի պատիվ Հայաստանյայց Եկեղեցու Գահակալի, կազմակերպեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա եղան Վրաց Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, հայ հոգևորա-

կանաց դասը, Վրաստանի հայոց թեմի թեմական խորհրդի անդամներ, մտավորականներ, արվեստագետներ և պաշտոնական այլ անձինք:

Ճաշկերույթին ներկա էր Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազորը՝ իր երկու գործակիցներով:

Ճաշկերույթի ընթացքում ճառեր փոխանակվեցին երկու Հայրապետների միջև:

Վրաստանի մայրաքաղաքում գտնվելու օրերին Վեհափառ Հայրապետը այցելեց վրացական և ռուսական մի շարք եկեղեցիներ, Հավլաբարի հայոց Ս. Էջմիածին եկեղեցի, Ստեփան Շահումյանի անվան հայկական դրամատիկական թատրոնում ներկա եղավ թատերական ներկայացման, այցելեց նաև վրացական հին ձեռագրերի պետական ինստիտուտ և այլ տեսարժան վայրեր:

Հայոց Հայրապետի սույն այցելությունը Վրաստան և նրա հանդիպումը վրացական օրթոդոքս Եկեղեցու Հովվապետի հետ առավել ամրապնդեց երկու քույր Եկեղեցիների եղբայրական կապերն ու հայ և վրացի ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
6 դեկտեմբեր 1984 թ.